
ԴԱՐՉՎԱԾՔՆԵՐԻ ՈՃԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
Ս. ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆԻ ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ԼԻԼԻ ՄԻՐՈՒՄՅԱՆ

Ս. Կապուտիկյանի «Քարավանները դեռ քայլում են» (1964), «Խճանկար հոգու և քարտեզի գույներից» (1976) հուշագրություններն առանձնանում են իրենց լեզվատճական յուրահատկությամբ: Այստեղ պարզորոշ երևում են հեղինակի գեղարվեստական մտածողությունը և պատկերավորման միջոցներից օգտվելու անսպառ շնորհը:

Լինելով գեղարվեստավերագրական ժանր՝ հուշագրությունը ներառում է տարբեր ոճերի դրսևորումներ՝ գեղարվեստական, հրապարակախոսական, առօրյա – խոսակցական: Ս. Կապուտիկյանի հուշագրություններում առօրյա – խոսակցական ոճի հետաքրքիր դրսևորումներից են բազմաթիվ դարձվածքները, որոնք բառապաշարի կարևոր ու յուրահատուկ մասն են կազմում:

Ինչպես գիտենք, դարձվածքները խոսքը ոճավորող, խոսքին սեղմություն, հակիրճություն, հուզաարտահայտչական երանգ, վերաբերմունքային լիցք հաղորդող լեզվական միջոցներ են, որոնց ուսումնասիրության առաջին քայլը հայ լեզվաբանության մեջ կատարել է Ս. Աբեղյանը՝ դարձվածք համարելով իմաստային փոփոխության ենթարկված, վերաիմաստավորված կայուն կապակցությունները, բառերի «նորիմաստ կապակցությունները»¹: Որպես «փոխաբերական – այլաբանական միասնական իմաստ ունեցող ամեն մի կայուն, բառային անբաժանելի, պատրաստի վերարտադրելի կապակցություններ»² առօրյա – խոսակցական ոճին բնորոշ բառային այս միավորներն արտացոլում են ժողովրդի ազգային մտածողությունը, աշխարհաճանաչումը, բարքերը, կենցաղը, ինչը նպաստում է լեզվի ժողովրդայնությանը: «Կարճ ու դիպուկ լեզվական այս միավորները ազգային լեզվամտածողության ամենակուռ ու ամենապատկերավոր արտահայտություններն են»³:

Այն, որ դարձվածքներն արտացոլում են ժողովրդի լեզվամտածողության ինքնատիպությունը, «Խճանկար հոգու և քարտեզի գույներից» հուշագրությունում հաճախ է շեշտում նաև հենց ինքը՝ գրողը: Դարձ-

¹ Ս. Աբեղյան. Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 151:

² Գ. Զահուկյան, Է. Աղայան, Վ. Առաքելյան, Վ. Քոսյան. Հայոց լեզու, Ապրակ, Երևան, 1980, էջ 476:

³ Խ. Բաղդիկյան. Դարձվածային ոճաբանություն, Երևան, 2000, էջ 14:

վածքի կողքին գործածելով «ասում է ժողովուրդը», «ժողովրդական լեզվով ասած» և նման այլ արտահայտություններ, որոնք դարձվածաբանության մեջ կոչվում են օժանդակ ցուցիչներ⁴ գրողն ակնարկում է նաև դարձվածքի ծագման աղբյուրն ու ճշմարտացիությունը. «Հարցումս ավելորդ էր. «սրտումը տեղ լինի», – ասում է ժողովուրդը»⁵, «... որին ժողովուրդը «շենք ու շնորհք» անունն է տալիս» (Խ, 118), «... ասաջ սփյուռք – Հայաստան կապերը նմանվում էին երկու սիրահարների, ժողովրդական լեզվով ասած՝ «սերը աթարին էլ կկաչի» հոգեվիճակին ...» (Խ, 235):

Ս. Կապուտիկյանի «Քարավանները դեռ քայլում են», «Խճանկար հոգու և քարտեզի գույներից» հուշագրություններում ոճական զանազան խնդիրներ լուծող բազմաբնույթ դարձվածքների տեղին և հաջող գործածությունը նպաստում է հեղինակային խոսքի⁶ հակիրճությանը, որը դարձվածքի էական առանձնահատկություններից մեկն է: Լեզվի բանավոր, խոսակցական տարբերակին բնորոշ լեզվական այդ միջոցներն աշխուժություն են հաղորդում խոսքին և հնարավորություն են տալիս խուսափելու ավելորդ նկարագրություններից: Այսպես՝ Մոնրեալում ապրող մտավորականի նյութապես անապահով վիճակը հակիրճ ու տպավորիչ է բնորոշում հաց տալ (ապրուստի միջոցներով ապահովել) ժողովրդական դարձվածքը՝ գործածված ժխտական իմաստով: «Գրի, լրագրի մարդ» էր Վահեն, սակայն «... այս բոլորը, մանավանդ այստեղի պայմաններում, «հաց չի տալիս» ...» (Խ, 41):

Մեկ այլ դեպքում գրողը վիզ ծռել դարձվածքին է դիմում ամուսնու մահից հետո լվացք անելով որբեր մեծացնելու ժառանգությունը ստացած Սուրեն Արքիբրիյանի մոր ծանր ու խեղճ կյանքն ընդգծելու նպատակով. «... հայրը մնաս բարով է ասում աշխարհին, թողնելով կնոջը՝ աշխարհի գորավորներին վիզ ծռելով» (Խ, 92):

Իրավիճակն ընդգծված, խտացված ձևով են ներկայացնում չափազանցության ոճական եղանակով ստեղծված որոշ դարձվածքներ: Սաստկական բովանդակություն ձեռք բերած այդ դարձվածքների գործածությամբ հեղինակը ստեղծում է առավել տպավորիչ պատկերներ: Ոճական այդպիսի դեր է կատարում ասեղ զցելու տեղ չկա դարձվածքը Մեն-Գատրինում կառուցված առաջին հայ եկեղեցում հավաքվածների հոծ բազմությունը, փողոցում մեքենաների խցանումը բնութագրելիս. «... սրահում ասեղ զցելու տեղ չկա» (Խ, 25), «Փողոցում մեքենաների խտությունից ասեղ զցելու տեղ չկա» (Խ, 201):

⁴ Տե՛ս Պ. Բեդիբյան. Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Երևան, 1973, էջ 23:

⁵ Ս. Կապուտիկյան. Երկեր 3 հատորով, հ. 3, Խճանկար հոգու և քարտեզի գույներից, Երևան, 1985, էջ 235 (այսուհետև կտրվի համառոտագրությամբ՝ Խ և կնշվի էջը):

⁶ Հորվածում քննել ենք միայն հեղինակային լեզվում գործածվող դարձվածքների ոճական արժեքը:

Մասսկական երանգավորում ունեցող շունը տիրոջը չճանաչել դարձվածքը տպավորիչ է բնորոշում «Երիտասարդական կենտրոն» հիմնարկության խառնաշփոթ իրավիճակը. «... ուրիշ պարտականություններ ունի իր վրա այդ «Յութ-սենտրը», բնորոշ արտահայտությունը դարի խառնաշփոթ «շունը տիրոջը չճանաչող» հոգեվիճակի» (Խ, 124):

Ոճական նույն նպատակով է գործածված կրակ կտրել դարձվածքը «Քնար» երգչախմբի ղեկավար Անդրանիկ վարդապետի ոգևորությունը շեշտող հետևյալ արտահայտությունում. «...Անդրանիկ վարդապետը՝ ...կրակ կտրած երգում ու երգեցնում է բոլորին ...»⁷:

Հերոսուհու՝ գրողին մտերիմ Լիդայի խառնվածքի էական կողմերից մեկը՝ աշխուժությունն է բնութագրում ոճական հարուստ լիցք կրող կրակի կտոր դարձվածքը. «Լիդան կրակի կտոր է» (Խ, 82):

Խնդրո առարկա հուշագրություններում դարձվածքները հերոսների արտաքինը բնութագրելու, նրանց խառնվածքի էական կողմերը, տրամադրությունն առավել տպավորիչ բացահայտելու լեզվական անփոխարինելի միջոցներ են:

Մոնրեալի «Հին Մյունխեն» գարեջրատան փողային նվագախմբի անդամների արտաքինը տպավորիչ է բնութագրում փոքր գցել դարձվածքը. «... նվագածուները՝ մեծ մասամբ խոշորամարմին, փոքր գցած տղամարդիկ՝ կարճիկ վարտիքներով են» (Խ, 141):

Չեռքից գնալ դարձվածքի գործածությամբ մի կողմից դիպուկ բնորոշվում է հերոսուհու՝ մեկ տարում երկու կորուստ ունեցած մորաքրոջ հյուսված, ոչ առողջ արտաքինը, մյուս կողմից բացահայտվում են նրա ծանր ապրումներն ու հոգեկան տանջանքները. «Մորաքույրս այդ երկու կորուստներից հետո «ձեռքից գնացել է»» (Խ, 49):

Մեկ այլ դեպքում դարձվածքը դարձել է թարգմանության իր գործը դժվարությամբ կատարող հերոսուհուն՝ Մեդային, դիպուկ բնութագրող միջոց. «... Հրայր Աճառյան չէ Մեդան, բայց «կարպետը ջրից հանում է»» (Խ, 118):

Հերոսների տվյալ պահի տրամադրությունը բնորոշող որոշ դարձվածքներ պարզապես անփոխարինելի են խոսքային համապատասխան կիրառություններում:

Քեֆին քեֆ չհասնել և սանձերը բաց թողնել դարձվածքների փոխարենն ոչ դարձվածային որևէ կառույց չի կարող նույն ճշտությամբ արտահայտել այլազգի երիտասարդների անչափ ուրախությունը, անգլիացու անլրջությունն ու անզսպվածությունը հետևյալ համատեքստերում. «երիտասարդների քեֆին քեֆ չի հասնում» (Խ, 142), «անգլիացին սանձերը լրիվ բաց է թողել» (Խ, 142):

⁷ Մ. Կ ա պ ու տ ի կ յ ա ն. Երկերի ժողովածու, 2 հատորով, հ. 2, Քարավանները դեռ քայլում են, Երևան, 1978, էջ 100 (այսուհետև կտրվի համառոտագրությամբ՝ Ք և կնշվի էջը):

Հերոսներին բնութագրող որոշ դարձվածքներ հուզաարտահայտչական հարուստ երանգ ունեն և դրսևորում են որոշակի վերաբերմունք գործող անձանց նկատմամբ: Ոճական այդպիսի դեր են կատարում սիրտ մտնել և անուշի կապել դարձվածքները բելգուհուն, Տիրանյանին, Բեաթրիսին բնութագրող հետևյալ արտահայտություններում՝ դրսևորելով գրողի համակրանքն ու սիրալիրությունը. «ուղղակի Պերճուհի էր ու դրա հետ մեկտեղ՝ կիրթ, սիրտ մտնող, նրբամիտ» (Ք, 324), «ափուկ, ժպտերես, սիրտ մտնող անձնավորություն է Տիրանյանը» (Ք, 101), «ամեն բան լավ տեսնող, մեղմացնող, անուշի կապող Բեաթրիսը ...» (Ք, 59):

Հանդես գալով որպես դեպքերին ակնաստես ճանապարհորդ՝ Ս. Կապուտիկյանը դարձվածքների միջոցով դիպուկ ու պատկերավոր է նկարագրում հենց իր՝ իբրև հերոսուհու տարբեր հոգեվիճակները: Փարիզից Բեյրութ մեկնող ինքնաթիռում իր խիստ լարվածությունը, անհանգիստ հոգեվիճակն այսպես է բնորոշում օտար, անձանոթ մարդկանց մեջ միայնակ հեղինակը՝ «կարծես փշերի վրա նստած լինեն» (Ք, 21):

Գրողը չի թաքցնում նաև իր հուզմունքը, սվյալ պահի ապրումները: Թե ինչ զգաց ու ապրեց հեղինակը՝ մերժելով տիկին Աստղիկի անակնկալ նվերը՝ իր թևի ժամացույցը, ակնհայտ ու տեսանելի է դարձնում գույն տալ, գույն առնել դարձվածքը. «...պետքը չի՛, – գույն տվի, գույն առա ես» (Ք, 468):

Հաճախ հեղինակը հայտնվում է անելանելի, անորոշ դրության մեջ: Նման իրավիճակները դիպուկ են բնորոշում կրակն ընկնել և երկու քարի արանքում մնալ դարձվածքները. «այս ի՛նչ կրակ էր ես ընկա...» (Խ, 433), «ս մնացել եմ երկու քարի արանքում» (Ք, 467):

Հուշագրություններում դարձվածքները նաև տարբեր երևույթների, իրողությունների նկատմամբ գրողի զգացմունքը պարզ, անմիջական արտահայտող լավագույն միջոցներ են: Խոսքին հուզաարտահայտչական երանգ հաղորդող եղանակավորող դարձվածային այդ պատրաստի կառույցները դրսևորում են գրողի զարմանքը, հիացմունքը, ցանկությունը. «բայց արի ու տես, որ կնոջ հարցերը գյուղական ուսուցչուհու քաշվածությունը չունեն» (Ք, 428), «ի՛նչ ասել կուզի, հայերը բարեբախտություն են ունեցել օգտվելու այդ խնամակալությունից ...» (Ք, 444), «յ քեզ բա՛ն ... Ահա թե ինչ է Լիբանանի համար անպատվություն համարում այս աղջիկը» (Ք, 383), «փառք աստծո, մենք հեռու ենք դրանից» (Խ, 203), «բարով-խերով չգրեր» (Ք, 334):

Ժողովրդական լայն տարածում ունեցող դարձվածքների մեջ առանձնանում են գրողի կողմից որոշակի փոփոխության ենթարկված դարձվածքները: Խոսքային համապատասխան իրադրությունում, ելնելով նյութից ու նպատակադրումից, Կապուտիկյանը փոխում է

դարձվածքի բաղադրիչներից մեկը կամ մի քանիսը: Խոսքային մակարդակում ստեղծված և համընդհանուր, համալեզվական նշանակություն չունեցող դարձվածային այդ միավորները դարձվածաբանության մեջ կոչվում են դիպվածային⁸: Դրանք տվյալ համատեքստում ստեղծվում են կոնկրետ հանգամանքները, իրավիճակները հակիրճ ու դիպուկ բնութագրելու ոճական նպատակով:

Նպատակ ունենալով ընդգծելու Ալիսի՝ Հարլեմ մեկնելու և սեամորթների հետ հանդիպելու իր ցանկությանն ընդառաջելը՝ Մ. Կապուտիկյանը կրակի վրա յուղ լցնել դարձվածքը փոխել է բաղձանքների վրա յուղ լցնելու. «լիսը ինքը յուղ լցրեց իմ այս կարգի բաղձանքների վրա» (Խ, 328):

«արավանները դեռ քայլում են» ըքում աչքերից արյուն կաթել դարձվածքի վերափոխված տարբերակում գրողի նպատակն է ընդգծել կերպարի արտաքին կողմերից մեկը՝ դեմքի խիստ ընդգծված կարմրությունը. «իզրանի առանց այն էլ կարմիր այտերից ուղղակի արյուն է կաթում» (Ք, 115):

Համատեքստում իմաստային յուրօրինակ զարգացում է ստացել ձեռքը քարի տակ լինել (անկարող, աղքատ լինել) դարձվածքը՝ ծնունդ տալով նոր՝ ձեռքը կրակի մեջ լինել (անկարող՝ խիստ զբաղված իմաստով) դարձվածքի: Բովանդակային առումով ժողովրդական դարձվածքի ձևափոխված տարբերակը համապատասխանում է ասելիքի ոճական նպատակադրմանը Միհրանին միշտ սրտաբաց ընդունող հեղինակի հետևյալ արտահայտությունում. «Գալիս է, զանգահարում, և ձեռքս կրակի մեջ էլ լինի, միննույն է, իմ դուռը բաց է նրա համար» (Խ, 250):

Մասնական երանգավորմամբ հատկանշվող յոթ քարի արանքից դուրս գալ դարձվածքի ձևափոխված տարբերակն ունի իմաստի մեղմացման նպատակ Նվարդ Մանուկյանի, Ֆլորա Վարդանյանի անընկճվածությունն ընդգծող հետևյալ համատեքստում. «... չեն ընկճվում, ինչ քարի տակ էլ լինեն, դուրս կգան» (Խ, 321):

Խոսքային համապատասխան իրադրության թելադրանքով գրողը կրճատել է խոսակցական էջը կորցնել՝ փալանի հետևից ման գալ դարձվածքի բաղադրիչները: Նեղացնելով դարձվածքում առկա փոխաբերության իմաստը՝ հեղինակն ընդգծել ու բացահայտել է հայրենիքից, հայրենի հողից, հարազատ տնից զրկված և Ամերիկա գաղթած հայ կնոջ կյանքն ու զբաղմունքը. «... ակումբում շշկլված, «էջը կորցրած»՝ հատակն էր մաքրում...» (Խ, 386):

Համատեքստում փոփոխության են ենթարկվել նաև այլ դարձվածքներ՝ աչքը կուշտ-ը՝ աչքը տեսած ու լիացած-ի՝ «... հիմա աչքս տեսած

⁸ Տե՛ս Պ. Բեդիբյան. նշվ. աշխ., էջ 41, 46:

է ու լիացած» (Խ, 11), գրպանը դատարկ-ը՝ գրպանը նեղ-ի՝ «... խոսքը վերաբերում է որքան էլ լայնահոգի, բայց գրպանը նեղ անձանց» (Ք, 320), հին գայլ-ը՝ փորձված գայլ-ի՝ «... առևտրի այս փորձված գայլերի մեջ ինչ պիտի անի ...» (Ք, 74), աչքը կտրել-ը՝ աչքը պոկել-ու՝ «մի հայուհի աչքը չի պոկում մեզանից ...» (Ք, 180):

Դարձվածքների փոփոխված այս տարբերակները, պահպանելով ընդհանուր իմաստը, որոշ չափով, սակայն, թուլացրել են իրենց արտահայտչականությունն ու պատկերավորությունը: Նոր ձևավորում ստացած, նույն կամ մոտ իմաստն արտահայտող հիշյալ դարձվածքները կարելի է դիտել առաջինների հոմանիշ դարձվածքներ:

Դարձվածքների գործածությունը ներդաշնակում է օտար ափերում ապաստանած հայ ժողովրդի, գրողին մտերիմ մարդկանց կյանքը բացահայտող հուշագրությունների թեմային: Դիպուկ ու տպավորիչ, կենդանի ու անմիջական դարձնելով խոսքը՝ լեզվական այդ միջոցները հուշագրությունների լեզվի ժողովրդայնության, գրողի ազգային ու պատկերավոր լեզվամտածողության ակնառու վկայություններից են:

СТИЛИСТИЧЕСКОЕ ПРИМЕНЕНИЕ ФРАЗЕОЛОГИЗМОВ В МЕМУАРАХ С. КАПУТИКЯН

ЛИЛИ МИРУМЯН

Резюме

В своих мемуарах «Караваны еще в пути» (1964) и «Меридианы карты и души» (1976) С. Капутикян использует разные пласты лексики. Она употребляет западный вариант армянского языка, диалектную лексику и народно-разговорный пласт. Кроме фразеологизмов, лексику мемуаров составляют также разговорные, повторяющиеся слова, которые отражают оригинальность национального и образного языкового мышления писателя.

THE STYLISTIC APPLICATION OF IDIOMS IN S. KAPUTIKYAN'S MEMOIRS

LILI MIRUMYAN

Summary

In her memoirs “Caravans are Still in the Way” (1964) and “Meridians of Maps and Soul” (1976) S. Kaputikyan uses different layers of vocabulary. She uses the western variant of the Armenian language, dialect vernacular and colloquial vocabulary. Except idioms, folk lexicon, repetitions, reduplications also express the originality of writer's national and figurative language mentality.